



ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 5

ՇԵ ՇԱԲԱԹ

24 ՅՈՒՆԻՍԱՐ 1906

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՒԱՌԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ	
Տարեկան	50 ՂԲԸ	Տարեկան	54 ՂԲԸ	Տարեկան	12 Ֆր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵՆ ՎԱՓԱՌԱՍՏՈՒՆ

Մ ԷՆ ԲԼԻՍԿ ԺՍՍՈՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆՈՅ

Կ. Պոլիս, ձեռքով Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կտրգ մը նորելուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՉԵՆԻԹԵՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ՉԵՆԻԹ ժամացոյցները Բարիկի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեկն բարձր պարգեւին արժանացած են:


Հատոր 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԵՐ — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آسادریان) شرکت مرتبه مطبعه سی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեայի քիւ 52



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ է անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց ու տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ռ
ՀԱՅԹԱՅԹԻՁ ԿԱՅՍ. ՓԱԼԱՏԱՆ
THE SINGER
MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարեւ լագործածը, հաստատունը ու դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՍԻՆԿԵՐԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐԸ

ՌԵՐՍ.

(1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .

(2. Մեծ փողոց, Կալաթա Մէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ

(1. Սինկեր խան, Թիւնկէի ետեւը.

(2. Գարաքէօյ, Թրամիլէյի կայարանին դէմ.

ՊԱԼԱՍ

(1. Սուլթան համալ .

(2. Սուլթան Պէյազիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԵԼԻՍՏԱՐ

Չարչը Պոյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղներ գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերս, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզզուլուի տունը:

Ֆ Է Ն Ի Ք Ս Օ Թ Ր Ի Շ Ի Է Ն

ԿԱՅՍ. ԹԱԿ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հիմնուած 1860 ին ի Վիէննա



ՆԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեսի գումար

31,008,000 ՖՐԱՆԿ

ՀՐԴԵՂԻ ՃԻՒՂ

Իրանագլուխ եւ Պահեսի գումար

17,000,000 ՖՐԱՆԿ



Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մարդկային կեանքի վրայ:

Ֆէնիքս Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չոգե- նաւի եւ առագաստանաւի վրայ:

Ընկերութեանս գրամատուոնն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդգնի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ
Գ. ՖԷՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՎԱՐԻՉ-ԽՄԲԱԳԻՐ Մ. ՊԱՊՕՆԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ ԹԻԻ 5

ՇԱԲԱԹ

28 ՅՈՒՆՈՒԱՐ 1906

ՍՐԱՄՏՈՒԹԻՒՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Առանց սրամտութեան գրականութիւնը մեծ ձանձրոյթ մըն է :

Բայց սրամտութիւնը հոս պէտք չէ ըմբռնել իբրեւ բոլորովին անշատ մաս մը, այսինքն գրական տարբեր սեռ մը: Այլ մեր ըսածը կը հասկցուի ամէն գրականութեան մէջ առհասարակ գտնուած զուարթ կողմը, զոր ընդհանրապէս հայերէսին մէջ զաւեշտ կրնանք կոչել, սահմանելով զայն այն տեսակ մը սրամտութիւնը, որ ընթերցողին չըթնեցուն վրայ թեթեւ ժպիտ մը կը ծրէ, ա՛յն խայթոցը՝ որ սուր տպաւորութիւն մը կը ձգէ ընթերցողին մօտ վրայ, ա՛յն անակնկալ խօսքը, յանկարծական բորբոքում մը՝ որ կը խմբուի պարզ զրուցատրութեան մը մակերեսին վրայ:

Առանց սրամտութեան, առանց խայթոցին, առանց այդ անակնկալ խօսքին՝ աշխարհի բոլոր ճառերը և ակադեմական բանախօսութիւնները բան մը չեն արժեր, կը ձանձրացնեն, կը յոգնեցնեն ընթերցողին և ունկնդրին միտքը, որ թրթռացուցիչ բան մը կ'ուզէ վերանայու և միջակէն, տափակէն բարձրանալու համար: Զաւեշտը — այս մտքով ըմբռնուած — աղն է ճառին, համեմքն է բոլոր խօսքերուն: Նոյն իսկ գլուխ գլխի պարզ խօսակցութիւնները, որոնք ամէնէն անտարբեր նիւթերու վրայ կը դառնան, չեն ուշանար տաղտկալի ըլլալու, եթէ զաւեշտը, նուրբ ոգին, իր ներկայութիւնը չմատնէ անըսւած պատկերի արագութեամբ մը: Խօսքին գրուագները պէտք է ոգեւորել հաճելի պէսպիսութեամբ մը, որ, ուրիշ բառով, սրամտութիւնն է, խօսուած նիւթին բնութեան իսկ քաղուած, անոր բաղկացու տարրը, զոր գտնել հարկ է սակայն նիւթը կազմող բաղադրան մասերուն մէկ ներքին կողմը:

Ամէն նիւթ իր զուարթ կողմը ունի առաւել կամ նուազ թաքնաբար,

և բնական ուղիմութենէ մը, կամ ստացական նրբին ունակութենէ մը կախում ունի ի վեր հանելը զայն: Ամէն նիւթ իր ծաղրելի, հեգնելի հանգամանքը ունի, և խօսողին մեծ վարպետութիւնը կը կայանայ առանց արուեստակեալ հնարքներու զայն պարզելուն մէջ: Եթէ սակայն դիմացինիդ զգացնես զայն գտնելու և գործածելու համար կրած գոռարութիւնդ, ըրած ջանքերդ, ա՛լ հոն գործ չունի զաւելտը, և աճարարութիւն մը կը դառնայ միայն ինչ որ խօսքին ծաղիկը ըլլալու կոչումը ունէր:

Ահա թէ ինչո՛ւ համար շատ քիչ են թուով ճշմարիտ գրագէտ կոչուելու արժանաւոր մարդիկը:

Մանաւանդ մեր մէջ, որ սկիզբէն ի վեր պէտք եղածին պէս չէ հասկցուած խօսելու կերպին այս անհրաժեշտ մասը, մեր գրականութեան բոլոր մշակուած սեռերուն մէջ կը տեսնուի այս պակասը, սրամտութեան պակասը, իր նուազագոյն աստիճանովը, և բարոյականութիւնը՝ որ ան ալ իր զուարթ կողմը ունի, և այս կողմին հաճելի երեւումովն է որ կրնայ ազդել անիկա, ենթադրուած է ըլլալ անժպիտ և տոգոյն ուրուական մը, որուն առջեւ պէտք է չբանայ միտքը, պէտք է խոնարհին ակնարկները, և քարոզ՝ մոտիկ ընեն անվերջանալի կրկնութիւններով:

Բարոյական ու վերացական սկզբունքներով տոգորուած՝ տաղտուկը արուեստի կարգ կ'անցնի մեր գրականութեան մէջ, և յօդուածները կամ տեսութիւնները կը դառնան կ'ըլլան շարք մը անիմաստ, անհամ ճամարտակութիւններ, որոնց մէջ կա՛յ ամէն բան, բաց ի անհրաժեշտ բանէն, որ ամբողջին գոյութեան պայմանը պիտի կազմէր:

Մէկ-երկու տողով հասկցուելիք բաները նախադասութեանց երկարաճիդ շղթայով մը կը խեղդենք, դատում մը զոր կարելի է ընել մեկ-երկու վճիռներով՝ կ'անհետանայ սնամէջ խօսքերու անծիր շողկապումի մը տակ:

Ինչպէս ըսինք, քանի որ մեր հին գրականութիւնը սրամտութեան նմոյշը չընծայեր մեզի, և զաւելտին գոյութիւնը ի զուր իր լաւագոյն պայմաններուն մէջ պիտի փնտռենք մեր մէջ, հարկ է ուրեմն սրամիտ ընթերցումներով ուռնացնել այդ ծաղիկը մեր մտքին մէջ:

Եթէ կ'ուզենք արժեցնել ո եւ է խօսք, որ տրուած նիւթի մը առթիւ հարկ կ'ըլլայ արտասանել կամ գրել, անհրաժեշտ է համեմել զայն: Առարկային պատկերացումը ասով միայն կարելի է, անոր տարածութիւնը ասով միայն կրնանք չափել, և աշխարհի բոլոր խօսքերը չեն իսկ կրնար սահմանել ո եւ է նիւթ, երբ այդ պաշտօնը ստանձնողը զաւելտին դիտակցութիւնը չունենայ: Զաւելտը խօսքին աւելն է, ինչպէս կեանքին համար երակին արիւնն է: Մեր գրածը կարգացնելու գաղտնիքը մեր գրածին բնութիւնը յայտնելու ծառայող այն իսկական պարբերութիւններն են, որոնք կը ծորին ինքնահոս. այդ ակերը կան ամէն նիւթի մէջ, բայց խիստ շատերուն համար ի զուր կը հոսին, որովհետեւ անծանօթ մնացած են անոնց, կամ այնպիսի երկրորդական նկատումներու մէջ ընկղմած են որ չեն զօրեր գտնելու կենդանարար

տարրը, որ բոլոր գրականութիւնները ապրեցնելու գաղտնիքն է: Անոր համար է որ չեն մեռնիր բնաւ Մօլիէրի, Շէքսպիրի, Տր. Ժօնսընի և ուրիշներու գրականութիւնները:

Տափակութիւններով կը վխտան մեր մէջ հրատարակուած գրութիւններուն ամենամեծ մասը, և յոյժ ցանցաւ է թիւը անոնց՝ որոնք իրական արժէքով գրուածներ ունին, այսինքն աղ կը դնեն իրենց պատրաստութեան մէջ: Նիւթին ռամիկը չըլլար, զայն պատրաստելու եղանակէն կախում ունի անոր համար ալ հոտն ալ: Հանճարեղ խոհարարութեան համար արհամարհելի առարկայ չկայ կերակուրի պնակները հաճելի և ախորժելի ընծայելու համար:

Զաւեշտը աղն է գրուածքին, կենդանութիւնն է նիւթին, երբ իր չափովը մատակարարուի:

Դանդաղ գնացքը, ուռուցիկ պարպատումը անկէտ ու անծայր պարբերութիւններու՝ կը վհատեցնեն ընթերցողը, իսկ քննադատին համար ո եւ է արժէքէ բոլորովին զուրկ են: Թեթեւ ա՛յն չնորհքը, որ վայելչութիւնն ու կեանքն է գրուածքին, կը փնտռուի անշուշտ հաւասարապէս թէ՛ արձակ և թէ՛ ոտանաւոր գրութիւններուն մէջ, ա՛յն հեշտ ու ընթացիկ սահունութիւնը որով դիւրաւ կը մարսուին ըսուածները և գրուածները: Տաղանդը աւելորդ բեռ մըն է առանց անոր, թէ՛ ունեցողին համար և թէ անոնց համար, որոնք կը հարկադրուին մտիկ ընել զայն կամ ընթեռնուլ:

Տ.

ՊԱՐՁ ԽՕՍՔԵՐ

ՁԻՈՒՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Անցած օր Սրբազանին մէկը քարոզ մը տուեր է, որուն մէջ հանգուցեալ յարգելի անձնաւորութեան մը յիշատակը օրհնելէ ետք, սկսեր է անոր ազգականներուն կեանքէն մանրամասնութիւններ յիշել: Օրինակի համար, ազգականին մէկուն ձի նստելու եղանակը պատմեր է եւ ձիուն վրայ ի՛նչպէս բարեւ տալը ու բարեւ առնելը նկարագրեր է գունագեղ բացատրութիւններով:

Այս պարագան նորէն ուշադրութիւն կը հրաւիրէ կէտի մը վրայ որ քանիցս խնդրոյ նիւթ եղած է մեր լրագիրներուն մէջ: Թաղային քարոզիչները տարին տասներկու ամիս մէկ եկեղեցիի մէջ միայն եւ մի եւնոյն հաւատացեալներուն առջեւ քարոզելով, ի հարկէ այլ եւս պէտքը չեն զգար իրենց հոգեւոր պերճախօսութիւնը մշակելու: Ուս-

տի լաւագոյն կարգադրութիւն մը եղած կ'ըլլայ եթէ մեր վարդապետները ամէն կիրակի մայրաքաղաքիս զանազան եկեղեցիներուն մէջ քարոզելու հրաւիրուին: Ասոր օգուտը կրկին է: Նախ որ քարոզիչը ճիգ մը կ'ընէ իր կրօնական հմտութեան ու հոգեւոր պերճախօսութեան վրայ լաւ գաղափար մը ներշնչելու համար իր ունկնդիրներուն, եւ երկրորդ՝ հաւատացեալները հոգեկան նորանոր հաճոյքներ կը վայելեն, իւրաքանչիւր եկեղեցականի խօսելու եւ քարոզելու կարողութեանը վրայ գաղափար մը կը կազմեն եւ կրնան վստահ ըլլալ որ սրբազան բեմին վրայէն գոնէ միօրինակ տաղտկալի խօսքեր պիտի չլսեն իբրեւ բացատրութիւն քրիստոնէական վարդապետութեան:

Շրջուն քարոզչութեան օրինակը Ս. Պատրիարքը ի՛նք տուած է արդէն եւ կրօն. ժողովը պատճառ մը չունի այս գեղեցիկ օրինակը չընդհանրացնելու մեր եկեղեցիներուն մէջ:

ՍԻՄԵՈՆ

ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ

ԿԸ ԲՈՂՈՔԷ՝

(Շարունակութիւն 4րդ թիւին)

— Կը հարցնես, վարպետ, թէ ի՞նչ տարօրինակութիւններ տեսա՞յ: Ներեցէ՛ք ուրեմն, որ մի առ մի թուեմ զանոնք:

Ա. Բ. Գ. յօդուածներու վրայ հարկ չեմ տեսներ ծանրանալ, վասն զի անոնք իմ արտաքին երեւոյթներս են, եւ մենք գիտենք թէ երեւնալու, եւ մանաւանդ աղէկ երեւնալու տենչը որքա՛ն արմատացած է մեր մէջ, ուստի արտաքին երեւոյթները աղէկ կամ գէշ միշտ կը փրկուին ընդհանրապէս մեր կրթական գործերուն մէջ:

Առնենք ուրեմն Դ. յօդուածը, որով օժտած ես զիս, մե՛ծ վարպետ:

« Թաղական Խորհրդոյ պարտաւորութիւնըն է հոգ տանիլ որ թաղին մէջ գտնուած ու դպրոցական տարիք ունեցող մանուկներէն ոչ մին զրկուի նախնական տարրական կրթութենէ: Եթէ գտնուին ծնողքներ որք իրենց զաւակաց կրթութեան անփոյթ լինին պէտք է որ թէ անձամբ եւ թէ Բարոզչին կամ Աւագերիցուն միջոցաւ յորդոր ու խրատ եւ ամէն բարոյական միջոց ի գործ դնէ պարտաւորելու համար այնպիսիներն իրենց ծնողական պարտքը կատարելու: Անուղղայից անունները Թաղական Խորհուրդը կը հաղորդէ գաւառաց մէջ առ Ս. Առաքնորդն, իսկ Մայրաքաղաքիս մէջ առ Ս. Պատրիարքն, որք նոյնպէս յորդորական միջոցներ ի գործ դնելէ յետոյ՝ երբ չեն յաջողիր, Թաղական Խորհրդոյ ընտրողութեան եւ ընտրելութեան իրաւունքէ կը զրկեն պարտազանցները »:

Հսէ՛ք, վարպետ, սոյն յօդուածին զԸ-խոմբին հակառակը չէ՞ որ կը գործադրուի այժմ բոլոր Թաղային վարժարանաց մէջ ընդհանրապէս: Թաղական Խորհուրդները փոխանակ յորդորելու ծնողքներն որ իրենց զաւակները վարժարան զրկեն, անոնք ընդհակառակը տղաքը՝ կարտաքսեն անկէ, եւ գիտէք ինչո՞ւ համար, վասն զի ամսաթոշակ չեն բերած, վասն զի դասագրքերը տակա-

ւին չեն առած, վասն զի գծագրութեան համար թուղթ, մատիտ չեն հայթայթած, վասն զի, այո՛, վասն զի ցեխոտ օգին լաւ-թիկ չեն հագած եւ որ ի կարգին:

— Տղաս, դժբաղդաբար ստիպուած եմ իրաւունք տալ քեզի, բայց ի՞նչ ըսեմ սա Թաղային մարմիններուն, որոնք եթէ իրենց Թաղային տնտեսներու հասոյթներուն համեմատ իրենց ծախքերն որոշէին, այն առնես բնաւ այս անտեղութիւնները չպիտի պատահէին: Փառասիրութիւնը զիրենք կը մղէ իրենց գլխէն վեր ծախքերու դուռ բանալ: Ի՞նչ ըսել է, զոր օրինակ, տարրական կարգերէն սկսիլ Փրանսերէնի ուսուցումը, քանի որ այդ կարգերը կազմող աշակերտները լաւ հասկցուած ընթերցանութիւն մը ընելու անկարող են: Մանաւանդ թէ ԺԱ. յօդուածով արտօնած էի զքեզ Փրանսերէնի ուսումը աւանդել միջին եւ բարձրագոյն դասընթացից մէջ միայն: Ինչո՞ւ աւելորդ ծախք ընել տարրականին մէջ Փրանսերէն աւելցնելով: Պէտք է գիտնալ թէ պարտաւորիչ նախակրթութենէն աւելի ընդարձակ կրթութիւն մը կամաւոր կրնայ ըլլալ կարողութեան եւ միջոցներուն չափով թէ՛ ծնողաց եւ թէ Թաղային վարչութեանց: Այսպէս ուրեմն աւելորդ ծախքերը կարենալ հայթայթելու համար կ'ըստիպեն ծնողքները որ իրենց կարողութենէն վեր թողանան վճարեն կամ ուրիշ պէտքերու հասնին, բայց ... չարունակէ՛ տեսնեմ տակաւին ի՞նչ տարօրինակութիւններ պիտի թուես:

— Փառասիրութիւնը, միմիայն Թաղային մարմիններուն մէջ չէ որ այժարծուած է, վարպետ, այլ նոյն իսկ այդ Թաղային մարմիններուն վրայ հսկող մարմինն ալ անով սողգորուած է: Փառասիրութիւնը չէ՞ որ այս վերջին մարմինը դրդած է տակն ու վրայ ընելու զիս, առանց լաւ մը հասկնալու իմ տրամադրութեանցս ոգին:

— Դուռն այլ եւս հիննալ սկսած ես, տղաս, հիննալ, կը հասկնա՞ս. ասոր համար է որ զքեզ տակն ու վրայ ընել կուզեն: Պիտի փոխեն զքեզ, փոխելու համար միայն: Պիտի փոխեն զքեզ, վասն զի 8 տարի է ի վեր հաստատուած ըլլալով, ի հարկէ այսքան ժամանակուան մէջ հինցա՛ծ, մաշած ես: Դո՛ւն, մի նայի՛ր որ զքեզ փոխել ու գողներն՝ իրենք իսկ շատո՞նց հինցած մաշած եւ բոլորովին փոխուելու կարօտ են:

(Շարունակութիւնը յաջորդիւ)

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ՇՈՒՐՋԸ

Առաջին յօդուածը զոր հրատարակած էինք «Հանրագիտակ» ի նախընթաց թիւին մէջ, բաւական մտահոգութիւն պատճառներ է Արեւելեան Մամուլի խմբագրութեան եւ անոր Պոլսոյ թղթակցին:

Բնաւ մեր մաքէն չէր անցներ որ անուններու մենաշնորհը տրուած ըլլար Իզմիրցի գրագէտներուն, որովհետեւ մէկէ աւելի Վաղինակներ կը գտնուին անշուշտ եւ ոչ ոք իրաւունք կրնայ ունենալ այդ անունը գործածելէ արգելել ուրիշ մը երբ իր կնքահայրը այդպէս մկրտած է զինքը:

«Արեւելեան Մամուլ» ի Վաղինակը կը յայտարարէ որ մեզի հետ առնչութիւն մը չունի, եւ թէ ինք միայն «Արեւելեան Մամուլ» ի մէջ կը գրէ եւ ուրիշ թերթի մէջ ո'չ, այդ պարագաները իրեն գիտնալիք բաներն են, բայց երբէք իրաւունք չունի որ համանուն անձ մը ուրիշ թերթի մը մէջ չի գրէ: Մենք մեր յօդուածին ներքեւ մեր անունն ու մականունը նշանակած էինք, բայց որովհետեւ ընտանեկան սովորութեան մը համաձայն՝ թէ Լեւոն եւ թէ Վաղինակ անուններով մկրտուած եմ, կատարեալ իրաւունք ունէի երկու անունները անջատորէն կամ միասին գործածելու, հետեւաբար իրար անցնելու ո եւ է պատճառ մը չկար, մանաւանդ թէ «Արեւելեան Մամուլ» ի ակնարկող ո եւ է կէտ մը չկար մեր գրուածքին մէջ:

Մեր անունը Լեւոն-Վաղինակ է, եւ մեր մականունը Փափագեան, ասոր համար է որ մենք մեր յօդուածները կըստորագրենք Լեւոն Վաղինակ Փափագեան:

Այս բացատրութիւնը տալու ստիպուեցանք, որպէս զի յիշեալ թղթակիցը հանդարտ սրտով չարունակէ նկարագրել Պոլսոյ կեանքը, զոր այնքան հաճոյքով կը կարդանք միշտ:

Շարունակենք մեր խորհրդածութիւնները օրուան եկեղեցական եւ վարչական խնդիրներուն վրայ: Պատրիարքարանի չըջանակներուն մէջ այս օրերս մասնաւոր հետաքրքրե-

րութեամբ կը դիտուին Երուսաղէմի հաշուական գործերը, որոնք տակաւին շատ հեռու կերեւան վերջնական լուծում մը ստանալէ: Անոնք որ հաշուեպահանջ կուսակցութեան կը պատկանէին, ասկէց առաջ վստահաբար կը յայտարարէին որ Գայրզճեան վարդապետին Պոլիս գալէն անմիջապէս վերջը երեւան պիտի հանուին Ղեւոնդ վարդապետին դրամական զեղծումները: Գայրզճեան վարդապետ եկաւ Պոլիս, եւ իր ընթացքով յուսախաբ ըրաւ իր ելմտական հանճարին վրայ հիացող բարեկամները: Իրողութիւնը բոլորովին հակառակը եղած է:

Երուսաղէմի արդի ելմտից տեսուչը Ղեւոնդ վարդապետի հետ ճակատ առ ճակատ գալուն պէս իր ինքնավստահութիւնը կորսնցուց եւ սկսաւ խուսաբողական ճամբաներ փնտռել, գործը ձգձգելու համար: Կարգացիք անշուշտ այն լուրը թէ՝ Գայրզճեան պայմանաժամ խնդրեր է որպէս զի Ղեւոնդ վարդապետի հաշիւները ուսումնասիրէ եւ ըստ այնմ պատասխան տայ իր ամբաստանութիւնները հաստատելու համար: Ասկէ աւելի զարմանալի երեւոյթ չկրնար ըլլալ:

Եթէ Ղեւոնդ վարդապետին զեղծում գործած ըլլալը կամ չըլլալը հաստատելու համար նոր քննութիւններու պէտք կը տեսնայ, ուրեմն ինչ էր մինչեւ հիմայ իր պոռնիքներուն հիմը, բայց ինչ որ ալ ըլլայ, կերեւայ թէ շատ խախուտ եղեր է այդ հիմը, որովհետեւ Ղեւոնդ վարդապետի պէս ելմտագէտ անձնաւորութեան մը արժանիքը այդ տեսակ անհիմն ամբաստանութիւններով չէ որ կարելի պիտի ըլլայ նուազեցնել: Պատրիարքարանը անկողնակալ եւ հաշուագէտ անձերէ քննիչ Յանձնաժողով մը կազմած է, որ դրական ապացոյցներու վրայ միայն կրնայ աննպաստ վճիռ մը տալ Ղեւոնդ վարդապետի դէմ: Կ'երեւայ թէ Գայրզճեան վարդապետ այս կէտը նկատի առած չէր եւ ասոր վերագրելի է անշուշտ իր չուարումը, զոր ցոյց կուտայ ժամանակէ մը ի վեր:

Մենք առաջին օրէն ի վեր մեծ գաղափար ունէինք Ղեւոնդ վարդապետի անձնական արժանիքի եւ կարողութեան վրայ, եւ ուրախ ենք որ՝ նոյն իսկ իր ամենէն ոխե-

րիմ հակառակորդները իրենց բոլոր ճարտարութիւնը գործածելով հանդերձ, չեն կրնար ստուեր ածել անոր պայծառ ճակտին վրայ:

• * •

Մինչ Պոլսոյ մէջ այս ձեռնածութիւնները ի դորձ կը շարունակուին հակադեմոկրատներու կողմէ, Երուսաղէմի վանքին մէջ ալ կը շարունակուին այս կարգի շահատակութիւններ: Գարդագիք անշուշտ թէ ինչպէս շնորհունակ վարդապետ մը Պոլսոյ Ս. Պատրիարքին կողմէ Մամբրէ եպիսկոպոսին շրկուած պաշտօնագիր մը կը յանդգնի բանալու եւ ընդօրինակելու:

Մինակ այս պարագան կը բաւէ գաղափար մը կազմելու համար թէ՛ այս վարդապետները հաշուական խնդրոյ պատրուակին տակ, անձնական կիրք մը գոհացնել կուգեն Ղեւոնդ վարդապետի համակիրները անուանակելով լրագրաց միջոցաւ: Մեր հասարակութիւնը ալ հասկցաւ թէ Երուսաղէմի վանքին տխրահոգակ դերակատարները որքան նուազ խիղճ ունին, որ իրենց այս անպատկառ ընթացքով՝ նիւթական մեծ վնասներ կը պատճառեն մեր դարաւոր վանքին: Կը պահանջենք որ վերջ մը տրուի այս անտեղութիւններուն, որոնք անշուշտ պատիւ չեն բերեր Հայ եկեղեցականութեան:

ԼԵՒՈՆ-ՎԱՂԻՆԱԿ

ՊՈԼՍՈՅ ՀԱՅ

ՎԱՐԺԱՊԵՏՆԵՐԸ

Վաղուան սերունդին կրթութեան կենսական հարցին լուծման մէկ կարեւոր մակերեսն ալ անշուշտ մեր մտքի մշակողներուն կացութեան ու վիճակին ուսումնասիրութեան է կախումն ունի:

Հետեւաբար դասաւորման մը մէջ պիտի պատկերացնենք, մեր Պոլսոյ վարժարաններուն մէջ դասախօսող ուսուցիչները, այս դասաւորման սկսելէն առաջ արդէն երկար

ուսումնասիրութիւն մը ըրած ենք, մօտէն տեղեկութիւններ քաղելով, մայրաքաղաքիս վարժարաններուն մէջ դասախօսող Ուսուցչական մարմնոյն վրայ:

Ասանկ ուսումնասիրութեան մը մէջ անաչառութիւնը լաւագոյն հիմն է, եւ մենք դէպի այդ ձգտելով չի պիտի վստահինք երբէք դրսերեւոյթին, չպիտի խարուինք այն ճոռոմ համբաւներէն, զոր շատեր իրենց շուրջ հիւսած են, յաճախ ի վեր պիտի հանենք առանձնացած, անձայն կեանք վարող ուսուցիչները:

Պատուոյ տեղերը պիտի տանք խոնոց, որոնք իսկապէս արժանի են, պիտի զգուշանանք միշտ կեղծաւոր ուսուցիչներէն ու պիտի ջանանք մատնանշել անկեղծ ու հաւատարիմ դաստիարակները, որոնք արդէն շատ անգամ խոնարհ, գոհ սիրտ եւ համեստ անձեր կ'ըլլան:

Մտքի կարողութեանց հետ հաւասարապէս ուշադրութեան պիտի առնուին ենթակային վարքն ու բնաւորութիւնը:

Մեր այս աշխատութեան նպատակը պիտի ըլլայ, ի մէջ այլոց ի վեր հանել մոռի տաղանդաւոր մշակներուն արժանաւորութիւնն եւ բազմաջան կեանքը, եւ փոխադարձաբար ցուցունել անոնք, որոնք բացարձակապէս ոչնչութիւններ են, սպորդած մեր կրթական յարկերուն մէջ, ու կ'սպասեն ասպագայ տաղանդաւոր մատաղ մտքերը:

Ասիկա կրկնակ ծառայութիւն մը չպիտի ըլլայ արդեօք: Մեր կրթական վերքին մէկ այտուցը պարզուելով հանդերձ, հասարակութիւնն ալ պիտի կրնայ ճանչնալ թէ ինչ ձեռքերու եւ որոնց յանձնուած է իր գաւազը, զայն մարդ տեսնելու ակնկալութիւնով:

Սկսելէ առաջ խօսիլ Ա. դասակարգին վերաբերող ուսուցիչներուն վրայ, յաջորդութիւնով առանձինն պիտի խօսինք մեր բազմահմուտ Ուսուցչապետին Ռ. Յ. Գէրպէրեանի վրայ, իբր անմրցակից եւ անբաղդատելի արդիւնաւորութեամբ դաստիարակչ. բոլոր թրքահայ կրթական յարկերուն տակ:

ԼԵՒՈՆ

AMELIA!

(Էջ մը ժամանակակից ... ապուշուրեմե)

Անձրեւոտ օր մըն է:

Հովը կը սուլէ փողոցներուն մէջ եւ տեղատարափ մը, ջրհեղեղէն մնացած, նաւարկելի գետակներու սկսած է վերածել փողոցները:

Լայն հովանոցի տակ պատսպարուած կը քալեմ հապճեպ, հետեւելով գէր հայու կընկան մը, որ հակառակ անհովանոց ըլլալուն, ամենայն անքաղաքաւարութեամբ կը մերժէ մատուցած հովանոցս, յայտարարելով որ իր էրկը, ոսկերիչ Աթանիկ աղան, ինծի պէս քառասուն հատ չեմ գիտեր ո՞ր գրպանէն կը հանէ եւ երբեք չձգեմ որ աս ու ան գլխէ հանեն իր աննման կիներ:

Պ'ն'ն'ն' ...:

Ձայնս ինծի կը քաշեմ վսխէս ու կը շարունակեմ ճամբաս մտածելով որ, այդ տեսակ Աթանիկ աղայի մը կնիկը, ըստ ամենայն հաւանականութեան, առնուազն քսան հատ «ինծի պէս» ալ ինք պիտի հանէր իր առջեւի գրպաններէն, արդարացեալու համար իր Աթանիկ աղայի մը աղջկը ըլլալու համբաւը:

Տակաւին մեր հաւարոյժները յօդուածներ կը գրեն, թխուման միջոցները կը բացատրեն եւ բնաւ չեն տեսներ մեր հայու կնիկները, որոնք ո՛հ, հաւերն ալ գերազանցել կսկսին հետզհետէ արտադրութեան կողմէ, որ գետնախնձոր չէ ապահովաբար:

Այսպէս այդ օրը անձրեւոտ օդին փողոցներուն մէջ պարզուած տեսարանը — իմ ակնոցովս դիտուած պարագային — հիանալի էր եւ մէկուկէս ալ աւելի, եթէ կը ներէք:

Որովհետեւ կեանքիս մէջ երկու տեսարաններու հանդիպած եմ միայն, որոնք անհունօրէն զգլխիչ եւ անհամեմատօրէն գերազանց են ... Դաւնէօփի եւ Լիթլըրիչի ներկայացումներէն:

Ասոնցմէ առաջինը՝ Դատաստանական խորհուրդին սպասման սրահին մէջ տեղի կունենայ ամէն շաբթու, երբ այդ խորհուրդը ի նիստ կը գումարուի, եւ երկրորդը՝

անձրեւոտ օդին փողոցներու մէջ կը պարզուի, երբ հովը անկալանթուօրէն եւ թիֆլիֆսիզճէ վեր կը վերցնէ նոյն միջոցներուն փողոցներէն անցնող կիներուն ... շրջազգեստները, զանոնք նաւաւար նիգօլիին առաջատներուն պէս ուռեցներով:

Եւ այդ անձրեւոտ օրը, կիներ, աղուոր սիրուն օրիորդներ, մեծ մասամբ առանց հովանոցի, զգլխիչ հանգրիճումներով ու խելքեր թռչնող ցուցադրումներով կանցնէին շուտ շուտ, իրարու ետեւէ, տրտնջալով հեղեղանման այդ անձրեւին եւ վարէն դէպ ի վեր փչող հիւսիւսային հովին դէմ, որոնք, ըստ իրենց, պատճառ կ'ըլլային որ այրերը ձրի հաճոյքներ վայելեն:

Խաչո՛ր, մեր կիները երթալով մէկմէկ կծծին կը դառնան, եւ հեռու չէ այն օրը, երբ նոյն իսկ սաչափ բան մը անգամ մեզի ցուցնելու համար քառասուն հազար նազ պիտի ընեն, եւ եթէ ձեռքերնուն գայ գաւաթ մը ջուրի մէջ պիտի խղզեն մեզի այրերս, որ վերջապէս վարժուած ենք — եթէ ոչ ջուրի — գէթ պարտքի մէջ ճարտարօրէն ... խղղուելու:

Բայց այս չէ հիմայ խնդիրը, դառնանք մեր պատմութեան:

Այն օրը վերացած, յափշտակուած, ինքզինքէս ելած, բերանաբաց, բաղդատական վիճակագրութիւնը կը պատրաստէի տուջեւէս, ետեւէս, աջէս ու ձախէս անցնող, ամէն ազգէ եւ կրօնքէ կիներու ... սրբունքներուն:

Յանկարծ նայուածքս կանգ առաւ, քրտան քայլ հեռուէն անցնող կնոջ մը ... սրբունքներուն վրայ, որոնց վարիչ տիրուհին, հին բարեկամուհի մըն էր:

Ամէլեան էր ... եթէ աչքերս չէին խաբեր զիս ...

Բայց որչա՛փ փոխուած էր եւ որչա՛փ զգալի յառաջդիմութիւններ եղած էին իր մարմնին վրայ: Փորձառութիւն մը, տարբեր հիւ մը, բան մը կար իր քալուածքին մէջ, եւ ամէն բանի տակէն դիւրութեամբ ելլող կնոջ մը՝ հովը:

Յայտնի էր թէ, մէկ քանի տարուան ժամանակամիջոցը լաւագոյն կերպով գործածած էր, եւ այդ միջոցը բաւական ե-

ղած էր իրեն, որպէս զի իր մարմինն աստիճանական զարգացումին հետ միացնէ նաեւ բոլոր այն accessoireները, որոնք կին մը ըղձալի կ'ընեն:

Իմ ճանչցած միջոցիս, պարզ աղջիկ մըն էր ան՝ իր կարճ շրջագգեստովը, եւ միեւնոյն աստե՛ն բարի ու ողորմած սրտի տէր ալ էր: Իր թաղին բոլոր հանած վարածները — պատուակալ սիրահարներ՝ բոլոր անտէր աղջիկներու — անօթի գայլերու պէս զայն չըրջապատած էին եւ Ամէլեա, այդ օրէն սկըսեալ տեսակ մը madona՛ն եղած էր այդ երկրպագուհիներուն:

Ախորժակը ուտելով կը բացուի կ'ըսէ առած մը, եւ Ամէլեա ալ, իր պզտիկ սիրային յաղթանակներէն չփափա՛ցած, գոնէ ես այնպէս եզրակացուցի նոյն օրը, ուզած էր լայնցնել շրջանակը իր ողորմութիւններուն, երբ այնչափ բազմաթիւ է թիւը տնանկ ազգատներուն:

Իրերու բնական ընթացքին հետեւելով Ամէլեա madeleine մը եղած էր, փոխանակ madonaի:

Եւ որչափ հաճելի է տեսնել հին բարեկամուհիներ, — մանաւանդ անձրեւոտ օրերը — որոնք madeleineներու փոխուած են:

Ոտքերս աչքերուս հետ համախորհուրդ, մեքենաբար հետեւեցան այդ կնոջ, Ամէլեայի... երկու սրունքներուն, որոնց բարակութիւնը երթալով կընդարձակուէր եւ երկու շնորհագեղ սրունքներ կը խօստանար:

Չեմ գիտեր, ինչո՛ւ. բայց այդ երկու փոքրիկ ոտքերը, որոնք սալայատակին վրայ թեթեւաքայլ կընթանային, այդ սրունքները որոնց եռամասին տեսքով միայն կրնայի երեւակայել մնացեալ մասին բովանդակ շնորհաճեւութիւնը, տարօրինակ ազդեցութիւն մը ըրին երեւակայութեանս վրայ, որ ասանկ պարագաներու մէջ չափազանց զգայուն է: Եւ արդէն ի՛նչ բան կայ գեղեցիկ սրունքէ մը աւելի յանկուցիչ եւ ցեխոտ փողոց մը անցնելու համար վեր վերցուած շրջագգեստէ մը աւելի մխիթարական:

Նոյն օրը սակայն այս տեսակ խորհրդածութիւններ չըրի, այլ որոշեցի մտտե՛նալ Ամէլեայիս, անոր ներկայացնելու համար ամբողջութիւնը սրտիս եւ կէսը հովանոցիս, որ անկողնիս պէս, շատ լայն էր մէկ հոգիի մը համար:

Քայլերս արագացուցի եւ զարմանալի յանդգնութիւնով մը, սրունք վրայ ես ալ զարմացայ վերջէն, թեւա թեւին անցուցի կամոց մը, առանց երկար բարակ յառաջարաններու, որոնց պէտք չկար բնականաբար: Եւ խօսքս այս նորագիւտ ընկերուհիս ուղղելով.

— Ո՛հ, սիրելի Ամէլեա, ըսի մեղմա՛ձայն, դուրս թափելով ամբողջ մթերքը Ֆրանսերէնիս եւ յունարէնիս, հաճեցէ՛ք ընդունիլ իմ ամբողջութիւնս, եթէ կարժէ բան մը եւ հովանոցիս կէսը... ո՛հ Ամէլի...ս...ս...

(Հոս կը պատրաստուէի ահագին ու երկան բարակ շխագուռ մը ընելու):

Բայց գրուած է եղեր որ այդ օրն ալ գործերս քիւս պիտի դառնան, հովին դէմ կրցուած հովանոցներու պէս: Որովհետեւ ինքը յանկարծ է գ առիւծի մը կատաղութեամբ քաշեց թեւը եւ բռունցքի ուժգին հարուածով մը, որ ցուլ մը անգամ կրնար տապալել, ինծի մէկ կողմ հրելէ ետքը, հըրացայտ աչքերով, որոնք ճարտնական մարդկոցնէրու կը նմանէին.

— Sapristie ! Ce n'est pas ton père ! Դժեց:

Ո՛հ, ինչ դժխեմ ճակատագիր. կինը զոր հին բարեկամուհիս, կարճ շրջագգեստաւոր Ամէլեա կարծած էի, պատուաւոր Ֆրանսուհի մըն է եղեր, որ բարիգեան հայոյանքներու ճոխ բառագրքին, ամենէն սոսկալի հայոյանքներէն մին նետեց ճակտիս, եւ ասիկայ անոր համար որ, ո՛հ գինքը Amélie կոչած էի:

Պարզ սխաղանքի մը համար այսչափ իրար անցնիլ, իրաւոր սոսկալի է:

Եւ պատճառը այդ կնոջ կատաղելուն անընձելի գաղտնիք մը մնաց բաւական ժամանակ:

Բայց յետոյ երբ փորձառութիւնը եւ Տէմիրճիպաշեան բառարանը ինծի սովորեցուցին թէ՛ amélie... բաղնիքի նալըն ալ կը նշանակէ եղեր, իրաւունք տուի այդ Փրանսուհիին:

Եւ ահա այդ օրուան ի յիշատակ Ծնունդի առտու մը հետեւեալ երկտողեան ոտանաւորին... ծնունդ տուի, երբ չէի կրնար բնականօրէն ծնունդ տալ... տարբեր բանի մը:

« Այս ճակատագիրս որչափ սեք սեւ է եղեր Աստուած

« Արդեօք ինչո՛ւ մոռ մեղանով չե գրուած « Եւ կամ ինչո՛ւ շուացարարին չե դրկուած: »

(Դուրեանին հետեւողութեամբ)

ԳՐԻԳՈՐ ԹՈՐՈՍԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՓՇՐԱՆՔՆԵՐ

Անօրոքեան հետեւանք

Չինացիք զանազան պատճառներով ուրիշ ազգերէ աւելի ենթակայ են անօթութեան: Սովոր միշտ աւելի սուր եւ ծաւալուն հանգամանք մը առած է մասնաւորապէս Չինաստանի մէջ, բնակիչներուն թիւին շատութեան եւ փոխադրութեան միջոցներուն անբաւականութեան կրկնակ պատճառներուն բերմամբ: Սակայն չինական հնարամտութիւնը միանալով բնական պէտքերը գոհայնելու բնագոյն, մղած են Ծայրագոյն Արեւելքի այդ ժողովուրդը, հնարելու ու տելիքի այլպան պատրաստութիւններ, որոնց նպատակը եղած է ակործակը խաթելով, իրական սնունդին զգալի պակասը լեցնել:

Հանրագիտակի ընթերցողներուն հաճոյք պատճառելու համար, համառօտակի պարզեմք հոս անօթութեան դեղահատին պատրաստութեան եղանակը:

Լիտր մը նաշիւ եւ լիտր մ'ալ համեմաւոր սոսինձ առնելով, կ'եփէք եռացած ջուրի մէջ, մինչեւ որ պինտ հայս մը կազմուի: Հայսը լաւ մը եփելէն ու վերջը պաղեցնելէն յետոյ, ոլոռի մեծութեամբ պզտիկ գընտակներ կը պատրաստէք, եւ չորնալէն յետոյ հալած դեղին մեղրամոմի մէջ կը նետէք ու կը սկսիք երերցնել, մինչեւ որ գընդիկները լաւ մը ուռին, յետոյ կրկին չուք տեղ մը կը դնէք չորնալու համար: Այս գործողութենէն յետոյ, հոգէ ամաններուն մէջ կը պահէք, ի հարկին գործածելու համար:

40—50 դեղահատ կը բաւէ որպէս զի մարդքանի մը օր առանց սնունդի մնայ, նմանօրինակ պարագայի մը մէջ անհրաժեշտ է որ մարդ ուտելէ յետոյ տաք ջուր խմէ: Միւս կողմանէ, փորձառութեամբ հաստատուած է թէ յիշեալ խառնադեղը խիստ յարմար ուտելիք մըն է sportmanներու եւ երկրախոյզներու կամ աշխարհագէտներու համար, որոնք իրենց պաշտօնին բերմամբ երկար արշաւանքներ ընելու ստիպողական հարկին մէջ կը գտնուին, սակայն միշտ կարեւոր է որ ամաթէօրները չափաւոր գործածութիւն

մը ընեն եւ հետզհետէ վարժուին այդ արտասովոր ուտելիքին:

Ծ. Խ. — Անկուտիներուն աչքը լոյս:

* * *

Առանց փոփօրի լուցի

Լոնտոնեան թերթի մը մէջ Բրոֆ. Սմիթ շահեկան տեղեկութիւններ կը հաղորդէ մեզ առանց Փոսթօրի վառուած լուցիկներուն վրայ, թուելով անոնց բազմատեսակ առաւելութիւնները, ի մէջ այլոց կ'ըսէ թէ այդ նորահնար լուցիկն առանց բացառութեան ամէն առարկայի վրայ շիւղելով կը բոցավառի, որով բոլորովին խոտորնակ կը համեմատի մեր Ազգ. Հիւանդանոցի լուցիկներուն հետ:

ՀՐԱԶԵԱՅ ՏԵՐՈՍԿԻ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

ՁՈՒՔԱՆԶԸ

Չարուկ, ըսաւ Յակոբ, խաղա՞նք ֆեզի հետ Տուն օյիճի, դուն հարս եղիր, ա՛ն պէպէզ, ես ալ փեսայ: Կարգադրեցի՞նք վերջապէս, Սասանները վայրեցուցին ալ ինչպէ՞ս:

Յակոբ, ըսաւ, հարս հանըմը տա Չարուկ, երեք հոգի պէտք է ըլլանք, չե՛ երկուք, Շունն ալ առնենք, գտակն հոս է մամիկին, Կապեմք գլխուն ան ալ ըլլայ քող իկին:

Աղունք կ'ըլլայ, պոռաց Յակոբ, եւ շուտով Գնաց քերաւ բոմպուլ շնիկն իրենց ֆով, Դուխը գտակ, ֆիթն ալ ակնոցը դրին, եւ սկսան դիտել անխօս ու լռին:

Երբ զբաղած էին տղայ այդ խաղուն՝ Մեծ մայրիկը ներս կը մտնէ նոյն պահուն, «Ի՞նչ կ'ընէք հոգ», կը հարցընէ զարմացած, «Տուն օյիճի կը խաղանք կոր», կ'ըսեն ցած:

Լաւ, գտակըս, ակնոցս ո՞ր ծակ խօքեցիք, Տա շունն ի՞նչ է որ շնորկեր հոգ, կեցի՞ք, Անպիտաններ, ի՞նչ է ըսէք շուտ քե ոչ... «Չոխնջնիս» է մամիկ, ըսին մեծագոյն:

Բերա

ԳՐ. ՀԱՄԲԻԿԵԱՆ

ԲԵԼ-ՄԵԼ ՔՐՈՆԻԿ

Յօդուածս սկսելէս առաջ, պարտ անձին կը համարիմ խորին շնորհակալիքս զգուշութեամբ նշննի ընել տալ՝ Օրիորդ Էլիզ Հաճեանի փետրազգայնիկ տոտիկներուն տակ այն տիտղոսին համար, զոր հաճած էր քօշէ ընել անունիս:

Տիտղոս՝ խոշպանձի,

Հեղինակ՝ Վ. Փափազեան,

Իսկ գալով զիս տեսնելու փափաքին, որուն յագուրդ տուեր է բարեկամուհի մը, չեմ զարմանար, քանի որ շատ՝ մը զիս տեսնալ փափաքողներ, ոչ թէ միայն պարզ հետաքրքրութենէ մը մղեալ, այլ նոյն իսկ զիս աշապուճուկի տեղ դնելով, անոր ասոր հարցուցած են,

— Տեսա՞ծ ես Վահան Փափազեանը ...

— Ֆիստա՞ն կը հագնի ...

— Քօսսէ կը դնէ՞ ...

— Բուտա՞ կը քսուի ... Կէ, չիտակ ըսէ ... տիւզկին ո՛ւնի երեսը ...

— Աչքերը քանի հատ են ...

— Մեզի պէ՞տ է ... Ինտո՞ր կը քալէ ...

— Ին է մի, ճին է մի ...

Եւ ասոնց նման արտառոց հարցումներ հասած են ականջիս, որոնց չիմ զարմանար ու չեմ չփանար:

Լաւ կը յիշեմ Ազնուուհի կամ համեստափայլ Էլիզ Հաճեանին մէջ բերած երեկոյթը, Օրիորդի մը պարելակերպը քնահատելով՝ ձեռքը չի ձգեցի ... մինչեւ առաւօտ, սակայն, բայց չեմ գիտեր թէ Էլիզին էր թէ ոչ Լուիզինը, բայց սա գիտեմ որ, առաւօտուն երբ բալթօիս օձիքը վեր տունէն դուրս կելայի, ձեռքիս մէջէն քառփիւղիկ կնկան հոտն անգամ ցնդած էր ֆոնեակին եւ ուխտիս հետ:

Ընտանեկան եւ ընկերական կեանքին մէջ փափաքներ կան, որոնք եթէ այս անգամ չիրականանան, միւս անգամ գալուն կրնան ձեռք բերուիլ անվրէպ: Այս կարգէն է նաեւ Օր. Էլիզի կաթնաթոյր Թաթիկին անցորդասէն իմիններուս մէջ:

×

Յօդուածս սկսելէ առաջ, կուզեմ քիչ մը ծեծել թղթախաղը:

Ես որ փիսիկի մը վրայ իսկ coup de main մը չեմ կրնար փորձել, հոս ֆաշախան մը պիտի քաշեմ ամէն անոնց, որոնք մոռցած քոյր, քեռին, ինկած են ջերմ բօքսին:

Գողմպոս՝ Ամէրիկան գտաւ, Կալիլէ՝ աշխարհիս շրջանը, Կիւթէմպէրկ՝ տպագրութեան գործիքը, Մառքօնի՝ անթէլ հեռագիրը, Ե. Թօլայեան՝ սրամտութիւնը աւելցուց գրականութեան մէջ, Գ. Թարոսեան՝ խնդացնելով մէկ քանի հիւանդութեանց բուժումը գտաւ, Ա. Մաւնուրը ապրեցնելու համար Ալփիար չորս հինգ եւրոպական թերթերու ապօճէ գրուեցաւ, վերջապէս թվերայ այսր ամենայնի՝ կիները խումարպազ ընելու համար Անգլիացի ոմն ոք բօֆեռը հնարեց:

Ձի հասներ հնարելու կըսեն այսօր ամէն անոնք, որոնք առաջ թղթի վրայ կը նշատէին, հիմա ճաւնասիօ ալ չունին սէքրետը վրայ անցնելու համար:

Այսօր թղթախաղը երեք դասակարգի բաժնուած է:

Աղքատը՝ սկամպիլ կը խաղայ, միջակորեարը՝ պոխ, իսկ հայ-լայֆ դասակարգը բօֆեռ, այնպէս որ հայֆ-լայֆ սալօնի մը մէջ եթէ կանանչ սեղան մը չի գտնուի մէջտեղը, այդ սալօնը հարուստ սալօն մը ըլլալէ կը դադրի, նոյն իսկ եթէ ճոխապէս զարդարուած ալ ըլլայ, կարեւորութիւն չըստանար, կանանչ սեղանին պակասը ամէն բան կըստորնացնէ ու առ ոչինչ կը գրէ:

Կըսեն թէ Եւրոպայի մէջ կիներ, իրենց ամուսիններուն օգտակար ըլլալու համար ցերեկին կ'երթան խանութներու գործատեղիներու սեղանին գլուխը կանցնին եւ այսպէսով կաշխատակցին անոնց վաստակին համար, մինչդեռ հոս, բողբոմին հակառակը, տիկիները մութնալուն կըսպասեն, որպէս զի

անցնին այն սեղանին առջեւ, որուն վրայ տղրուկներու պէս կըսկսին իրենց ամուսիններուն քսակը ծծել ու փճացնել, այս ալ ի փառս ալաֆուանկային (1):

Այսօր Բերայի մէջ այն տիկինը որ բռն չգիտեր, կամ չուզեր խաղալ, յարգէ պատիւէ զուրկ է, մինչդեռ ան որ կը սիրէ թղթախաղը՝ ձեռքի վրայ է միշտ, հրաւերները անձրելի պէս կը տեղան իր հասցէին, գիշեր մը պարապ չանցնիր:

Անցեալ օր տարեց կին մը, որ հայ-լայֆ սալօնները կը մտնայ կեղալ, չեմ գիտեր ի՞նչ պէս եղաւ իրեն հանդիպեցայ տուն մը:

Եւ որովհետեւ կուզէի մօտէն հասկնալ ու տեղեկանալ թօհոին մանրամասնութիւնները, մանաւանդ տիկնանց խոլմար-պագութեան վրայօք, ուղեւով բերնէք բան առնել, խօսք բացի,

— Ի՞նչպէս տիկին, Բերա կիները թուղթ կը խաղան կոր ...

— Հապա՛ ... հէմ ի՞նչ խաղալ ... Աստուած հեռու՛ ընէ ...

— Կաղաչեմ, եթէ կարելի է քիչ մը բացատրեցէք, ըսելուս վրայ, կիներ բաց ձգուած թէրքօղի խողովակի պէս պոռթկաց:

— Քա եսմըրում, նասըլ ըսեմ քի նասըլ հասկնաս, գիշեր եղաւ մի, միսաֆիր օտա-սիին կազերը մոմերը կը վառին կոր, երկու երեք տեղ մասա, քալինօի պէս, կնիկներն օր ըսես նէ տուվալթ տուվալթ, ալթըխ խենթենալթ բան: Սահաթը չորսին — քի մենք ատ վախիթը եսթախ կը մտնանք — նայիս օր սէնսին կիւրիւֆ կիւրիւֆ միսա-ֆիրներ, քօքօն քօքօն մատամաներ, մէկ թէլի վրայ կուգան սըրաւարտի կը շարուին կոր, առան կէս սահաթ, անխըտտր քի խաթըր սօրա մը ըլլայ քի չըլլայ, ան սիւս-լիւ կնիկները մասային էթրաֆը կը շարուին կոր, էրիկներին օր ըսես նէ տնտես աղ-բարի պէս, սիկառան բերանին, կէօյեամ քի իրենց կնիկները չեն ի պէս մէյմէկ քէօլէ քաշուած, քեան սիկառա, քեան զազէթա-յով վախիթ կանցունեն կոր: Անդին կնիկ-ները մասային էթրաֆը չիֆթ մոմերուն դէմը, ան դրած էլմաններին ալ բառըլ բառըլ կը պաշլայեն կոր թուղթի: Քա եսմ-

րում թուղթի մը պիչիմ քի ... Աստուած հեռու ընէ, ան մեր գիտցած քօնչինային պէս չէ, հինգ հինգ հատ ծառուրնին կառ-նեն, ֆըռէնկէ պաներ մը կ'ըսեն, իրարու աշկի մէջ կը նային, օռթան ափուճ մը բա-րայ կը նետեն, սաղերնուն կը դառնան սօ-լերնուն կը դառնան, միջերնուն մէկը ֆօռա-կ'ընէ, թուղթերը օռթան թափելուն կիպի, փարաները կը քաշէ առջին կը դնէ կոր: Ասոր ինչ չէյթանի օյին ըլլալը չեմ հասկցեր ամա, տեսածիս նայելով, երխըմ պան, եր-խըմ ...

— Շատ լաւ տիկին, միւսները ի՞նչ կը-նեն այդ միջոցին ...

— Քա ի՞նչ պիտի ընեն, քանաբէներուն քէօլէն կը մրափեն կոր զաւալըները, իշտէ ըսի եա, էրիկ չե՞ն քի, տնտէս աղբար, կը պէքէյէն կոր քի կնիկներնուն մէտէն ըլ-լայ, վախտը գայ առնեն տուն տանին ...

Տիկնոյ բերնէն լսածս նոյնութեամբ դրի հոս, իր պարզութեանը մէջ իրական պատ-կերը ըլլալուն համար թօհոին, որ ընդհան-րացած զրօսանք մը դարձած է այսօր ձոխ սալօններու մէջ: Մեր մէջ ֆէմինիզմը կոր-ծանարար անթոհ մը ունեցաւ շնորհիւ կա-նանց թօհոախաղին:

x

Յօդուածս վերջացնելէ առաջ, կարծեմ լաւ կ'ըլլայ, երբ երեք չորս խօսք ալ մեր վար-ժուհիներուն նուիրենք, յուսալով որ իր չի-նիչ ազդեցութիւնը կ'ունենայ:

Մեր մէջ ընդհանրապէս վարժուհի կըլ-լան այն օրիորդները, որոնց ծերունի հայրը գործէ քաշուած ըլլալով՝ քաշուած է տանը պուճախը, եւ մայրն ալ հազիւ կը հասնի ցերեկ գիշեր տաք կերակուր մը պատրաս-տելու, եւ օրը քսան եւ չորս ժամ ելը կը բռնէ խեղճին:

Մինչեւ այս տողերը գրած օրս, մեր մէջ մեծ թիւ մը չեն կազմեր այն վարժուհի-ները որոնք իրենց կոչման հաւատա-րիմ, եւ կամ վարժուհի անունը արդա-րացնող ուսում եւ մանկավարժութեան գիտակցութիւն ունենան: Հերիք է որ քը-սանին մօտ եւ կամ եռեսունը անցուկ օրի-որդ մը ըլլայ ան, քիթը բերանը տեղը եւ ... լեզուն բերնին մէջ դարձող, — Ու-

սովետական խորհուրդէն վկայական ունենալը կամ չունենալը երկրորդական խնդիր —:

Վարժուհիները ընդհանրապէս կողմնակցութեամբ է որ գործի զուխ կ'անցնին: Հոգաբարձութեան եւ կամ Թաղ. Խորհրդոյ մէկ անդամը տուն մը կը գտնուի զիպուածաւ, սրկէ նըկէ խօսք կը դառնայ, եւ ահա այդ տանը տիկինը խուշին խանասովը ինչպէս կ'ըսեն ռամկօրէն, լուր կը թռցնէ իր քանտիտաթին, որ անմիջապէս դէմքին բուռնան նորոգելով, եւ կամ մագին մէջ գունաւոր ժապաւէն մը աւելցնելով՝ պահեստի պլուզը կռնակը անցուցած թռեկ եփսրոհսի պէս կը հասնի, սրտով բաբախուն:

Ներկայ Հոգաբարձուն կամ Թաղականը, որը որ կուզէք սանկ ալլանի կեօզիւով վէրէն վար, վարէն վեր զննելէ վերջ, երբ տան տիկինը խօսք կ'առնէ:

— Օրիորդը կը փափաքի վարժուհի ըլլալ, արդեօք կարելի՞ է որ վարժարանը ընդունիք... մեծ բարիք մը ըրած պիտի ըլլաք, հայրը գործէ քաշուած է, մայրն ալ տկար, այս աղջիկը պիտի նայի տունը տեղը...

Ազան օրիորդը կրկին քննելով, յարմար կը դատէ ու,

— Շատ լաւ, կիրակի Խորհրդարան թող հրամայէ... արդէն մենք ալ ծագկոցին համար օրիորդ մը կուզէինք կոր... կ'ըսէ, միշտ աչքը օրիորդին վրան:

— Շատ շնորհակալ եմք, տուն մը շինելու չափ բարիք մըն է այս, Աստուծոյ վարձատրութիւն, կ'ըսէ տան տիկինը, եւ այս որոշման վրայ նոյն իսկ այդ ընդունուած օրիորդը կ'ելլայ ձեռքովը քօնեակ մ'ալ կը հրամայէ մենք ազալին, հատ մը, հատ մըն ալ, երրորդ մը, չորրորդ մը et ainsi de suite:

Ահա մեր կրթական գործերուն վիճակը իր իսկութեան մէջ: Մեր վարժարաններուն համար վարժուհի կ'ընտրուի այն սիւթէմով, ինչպէս պիտի ըլլար աղջիկտեսի, եւ կամ ամուսնութեան առթիւ:

Ժամանակ մը, Մեծայարդ բարեկամս Ս. Էֆէնտի, agente մը հաստատած էր գաւառի համար խնդրուած վարժուհիի commandesները կատարելու համար, բայց այդ անձնաւորութիւնը գեղեցկութենէ

աւելի ուսման կարողութիւնը նկատի կ'առնէր, մինչդեռ հոս, քիթի բերնի, երեսի գոյնի եւ աչքերու անուշ նայուածքները դեր կը խաղան: Բաւական է որ օրիորդը կեօսքերիչի ըլլայ, ալ վարժարանին տեղի պաշտը կը սեպուի, եւ պաշտպանեալը մենծ աղաներուն:

×

Քանի որ յօդուածս պիտի վերջացնեմ, սա ալ ըսեմ որ մեր աղջիկները անկրթութեան մղողը, եւ զանոնք գուլիսէ հանողը մայրերն են:

Առաջ, այսինքն գրեթէ 30-40 տարի առաջ 25-30 տարեկան օրիորդները ոչ թէ միայն ամուսնութեան վրայ գաղափար չունին եղեր, այլ եւ էրիկմարդ տեսնալուն, խառախոնճող տեսնալու պէս երեքերու մէջ կը պահուրտին եղեր, չի տեսնալու, չերեւալու համար:

Մինչդեռ հիմա... Աստուած մի առաջէ, երբ երիտասարդ մը տունէ մը ներս մտնայ, բոլոր աղջիկները կաթիլ մը անուշ տեսած ճանճերու պէս վրան կը թառնին, մէկզմէկ հրմտկելով, իրար կ'զեղով:

Մայրեր՝ որպէս զի իրենց սթօքը քչեն, իրենք իրենց բերնովը հրաւէր կը կարգան աղջիկներուն, որպէս զի սիւսերնին տան եւ գան նստին հիւրերու դէմը, կ'ոտրտուին, թեթեւան եւ մօտութիւն ցուցնեն, ւպէքի կը հաւնիսի հովկուլ գաղափարով:

Դիտեցէք, երբ ընտանեկան շրջանակի մը մէջ գտնուիք, եւ խօսակցութեան նիւթը ամուսնութեան վրայ դառնայ, մեծերէն աւելի օրիորդներն են որոնք գաղափար կը յայտնեն, կարծիք կը յայտնեն, կը հաւնին, չեն հաւնիր, եւ բնաւ կարգ չեն ձգեր իրենց մօրկանը, որ իր գիտցածը խօսի կամ գործադրէ:

Տեսէք, համարենք թէ սենեկի մը մէջ մէկ քանի տարեց կիներ եւ օրիորդներ բոլորած տղու մը խօսքը կ'ընեն:

— Ֆիլանճային տղան ալ աղջիկ կը փնտռէ կոր եղեր, իմացա՞ք... կ'ըսէ մայրը, խօսքը մէջ տեղէն, իսկ աչքերը իրեններուն վրայ ձգած...

— Աման մայրիկ, տա սօուկին խօսքը մընէք, ան ամէն տարի կարգուելու կ'ել-

լայ . . . կը պատասխանէ աղջիկը, քիթը
բերանը թթուեցնելով . . .

— Ինչու ատանկ կ'ըսես Զարուհի, խօսք
կ'առնէ, պզտիկը, հազիւ տասն եւ հինգ
տարեկան, բէք ալ չնորհքով տղայ է . . .

— Ամա՛ն . . . ո՛ւր տեղը չնորհքով է . . .
սիւլիւկի պէս պան պարակ մէկը . . . պէ-
տէհա՛վա կ'առնեմ ըսէ նէ չեմ ուզեր . . .

— Քա ետպրուա, դուն ալ հիշ մէկուն
չես հաւնիր . . . ի՞նչ ունի տղան . . .

— Ո՛ւֆ . . . մայրի՞կ . . . դուն առնելու
չես . . . մենք պիտի առնենք նէ, պէտք է
քի մեր ճաշակին յարմար ըլլայ . . .

Այս լակոնիկ, քիչ մըն ալ տիք պատաս-
խանէն վերջ, ալ հարկ չլայ երկարել նիւ-
թը, դոր ընդլայնել կուզէինք:

Կրնաք երեւակայել սըրբըխութիւնը եւ
անկրթութիւնը այն աղջկան՝ որ իր մօրը
երեսին համարձակի դիտողութիւն ընել
այսինչ կամ այնինչ երիտասարդին համար . . .

Յանցանքը որո՞ւնն է այս պարագային,
անմիտ եւ թոյլ մօրը չէ՞ յանցանքը, որ
տեղի կուտայ եւ այնքան երես, որ իր աղ-
ջիկը կամ աղջիկները ամենայն սըրբըխու-
թեամբ կը համարձակին ըսելու, «դուն առ-
նելու չե՞ս ես տղան . . . մենք պիտի առ-
նենք . . .»: Ու ըսել թէ՛ 20րդ դարը կա-
նացի էտէպիզոութեան այսինքն ֆեմինիզմի
դարն է:

×

Յօդուածս վերջացնելէ առաջ չի մոռնամ
ըսելու որ գալ շարժումն նիւթս պիտի ըլլայ՝

«Ակնցի մը ութը ժամուան գիշերային
զրօսանքը Բերայի մէջ»:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

XXXXXXXXXXXXXXXXXXXX

Կան կիներ որ եղինճին կը նմանին,
և սակայն բռնուելու աեղ ունին,
խեղճ էրիկներն զանոնք ինչպէս բըռ-
նելու եղանակը չգիտնալով, շատ
անգամ կը խայթուին:

ՀԻԻԾԱԽՏԱԻՈՐԸ

I

«Մի շա՛ր, մայր իմ, շարունակե ընթեռնույ
«Վեպրդ, որուն վախճանն կ'ուզեմ իմանալ
«Մի՛ արտասուիդ առթեն ինձ վիշտ, ու անդուշ
«Չարչարեն զիս, ըկեն հոգիս: — Բաւ է ալ . . .
«Կազդորուած եմ կարծես մի փիչ, ո՛հ մայր իմ
«Կ'ուզեմ ապրիլ: Ինչո՞ւ մեռնիր . . . ո՛հ, երբեք
«Այս մասեանը հաճոյ է ինձ, կը փարիմ
«Ես անոր, արդ, մխիթարե սիրտս հեզ»:

II

Կասարեղու համար փափաքն այդ խեղճին,
Կարդաց իւր վեպ, թշուառ մայրը, զի մայր էր.
Անհուն էր վիշտն. սխրութեան մեջ ցաւագին,
Ընդմիջեցին զինքն յաճախ հոծիւններ . . .
Երբ դիտէր նա սակաւօրեայ այդ ծաղկին
Տժգունիլն ու մարիլ անցնիլն իբր ցահ,
Աւա՛ղ . . . յիշէ կ'ուզէր երկիրն, թշուառ կին . . .
Վեպին վախճանն չե՞ր արդեն հոգ, շիրիւ, քահ:

III

Կը հասկընայ, կ'ըմբռնէ նա ամեն բան . . .
Խոպոտ ձայն մը դուրս կը թռչի իւր կուրծքէն,
Ո՛հ, կոյս Այիս, տասն եւ ութը տարեկան
Կը զգայ թէ ինք պիտի մեռնի ապագան . . .
Տկար ձայնը մօրն ուղղելով կը գրուցէ,
«Արդ գրկե՛ զիս, ժամն հասած է աւաթի,
«Հիւսիսաւոր դստերդ համար աղօթե՛,
«Որ երթայ շիրմին մեջ հանգչիլ խաղաղիկ»:

IV

Ժամն հնչեց խուլ, կես գիշեր էր, երբ անմեղն
Հրաժեշտ տար այս աշխարհի սին կեանքին . . .
Թշուառ, հեզ մայրն, արցունքներով սիրագեղ
Դողդոջ փայլով ծունր դուռ շաշագին,
Համբոյր մը նա դրոշմեց զաւկին ցուրտ անկիւն

• • •

Երեք օր վերջ գերեզմանասան խորհն,
Մուրճ ու գրոցի խուլ թոփիւններ շուռիւն,
Քարակոփ մ'էր որ կը կոեր հեզօրէն
Մարմարի վրայ սոյն մահերգը սխրագին.
«Աստ հանգցի հրեշտակաց խումբէն կոյս Այիս
«Որ կեաց ի կեանս ցաւոց, ի կեանս վշտալիս
«Եւ աւանդեաց իբր հրեշտակ գիւր հոգին»:

ԱՐԱՄ ՏՈՎՍԷՓԵԱՆ

ՅԻՐԱՌԻՑԱՆ ԽՕՍԳԵՐ

ՈՐՈՆՑ՝ ՊԱՐԱՊ ԽՕՍԳԵՐ ԱԼ ԿՆՍՈՒԻ

Ամբողջ ձմեռը 5-6 օր աղքատ մը տաք-
ցընելու համար Աղքատախնայները 5-6 ա-
միս գլուխ կարդուկեն եւ բաւական կըր
գումար մ'ալ կը գլտորեն ջնջին մասերու
բաժնելով, այն ալ շատ անգամ արժանա-
ւորագոյնը անտեսելով, քանի որ ամէն աղ-
քատի տրուած չէ ձուլալը շալկել ու Աղքա-
տախնամին դուռը երթալ: Չեմ գիտեր թէ
արդեօք կարելի չէ՞ ուրիշ կերպ մը գտնել:

X

Թերթերու մէջ շրտարակուած դաւա-
նափոխութեանց քով միշտ կը կարդանք
գրուած է այս ինչ երիտասարդին կամ աղ-
ջըկանը հետ ամուսնանալու համար... եւլն...
յաւելուածական պարբերութիւնը, չի գիտ-
ցուիր թէ դաւանափոխութեամբ կազմուած
ընտանեկան յարկին ալ քիչ ատենէն դա-
ւանը կը փոխուի մի:

X

Բնութեան օրէնքով հաստատուեցաւ թէ
մեր եկեղեցական քառաձայն երգեցողու-
թիւնները, խըտրելէն սկսեալ մինչեւ գա-
սըմ պիտի առնուի ի կիր (կը խնդրուի քի-
րէն չը հասկնալ) քանի որ անկէ վերջ հար-
բուխի ու օղիի յարմար եղանակը ըլլալուն
մեր տիրացուները արդէն բնականէն քառա-
հնգա-վեցաձայն կերգեն:

X

Էրիկ մարդիկ մեծ մարդ ըլլալու համար
թաղական կ'ըլլան, իսկ կնիկ մարդիկ մէկ
րուպ եօֆնով բօթին կը հագնին:

X

Թաղական մը դեռ չընտրուած, երբ
ընտրուիմ չեմ ընդունիր կ'ըսէ, երբ ընտ-
րուի՝ չընդունիր, նազ կ'ընէ ու կ'ընդունի,
երբ ընդունի երբեմն երբեմն կը հրաժարի,
սակայն կնոջը յորդորանքին վրայ նորէն
կ'ընդունի. ու այսպէս երբ չըջանին լրանա-
լուն մօտենայ, կաղթէ առ Բարձեալն որ
ժամ առաջ չըջանը բոլորի ու ազատի, եւ
երբ չըջանը կը բոլորի ու կազատի, անկէ
վերջն ալ վինքը վերստին չընտրողներու հետ

կը սրդողի ու քէն կ'ընէ, ու այլ եւս ոչ ե-
կեղեցի կերթայ, ոչ ալ իւղագին կուտայ,
(բացառութիւնները միշտ յարգելով, քանի որ
գործերը արդէն բացառութիւնները կը յայտ-
նեն, ահա թաղականեան մեծ մասին գոյնը:

X

Բաղդատական հաշիւ մը:

Երբ տիկին Չարիֆի կըտակ կ'ընէ ու
2¹/₂ միլիոն ֆուսը կուտայ, իմ ալ դեղին
հաւքս կըտ-կըտակ կ'ընէ ու մէկ հաւկիթ
միայն կուտայ:

X

Թէ ի՞նչ օգուտ ունին խելացի խօսքերը
մարդկային կեանքի յարափոփոխ ընթաց-
քին մէջ, պատմեմ անձնական փորձովս: Երբ
անցեալ օր մեր թաղի մէկ փողոցէն կանցնէի,
յամբաքայլ ու մտազբաղ, մտածելով թէ արդ-
եօք հիմա իմ ապագայ բարեկամս Տիար
Թօլա ինչ սքանչելի ժամանցներ կունենայ
Բերայի այս բարեկենդանական պարահան
դիսական, նուագահանդիսական թատերական
եղանակին մէջ, մինչ մենք հոս Սկիւ-
տար, կը թաթախեմ տիղմով. եւ ահա
յանկարծ միջին հաշուով մէկ քիւօ ծանրու-
թեամբ բազմանկիւն փողոցի քար մը հոն
խաղացող ընտրեւագոյն չարածճիւնէն
նետուած՝ եկաւ հանգչեցաւ ճիշդ անութա-
մէջիս, ողնաշարէս երկու սանդիմէթր դէպի
ձախ շեղակի, մարելուս մէկ աստիճան մը-
նալու պայմանաւ, երեւակայեցէ՛ք թէ ինչեր
չէի ըներ ես անոնց հօրը եւ եթէ հայր չու-
նենային անոնց մօրը, գոհացում պահանջե-
լով իմ պատուական անձիս դէմ եղածին,
երբ մի եւ նոյն ատեն չը յիշէի այն խելացի
խօսքը որ կ'ըսէ թէ «պտղատու ծառին քար
նետող շատ կ'ըլլայ»: ահա օգուտը խելացի
խօսքերուն որ ամէն խելացիի չի յարմարիր:

X

Որո՞նք են անբուժելի հիւանդութիւնները:
Կանանց ջղայինը, անկուտա-թօլայու-
թիւնը, ծառանուղ պօշպօղազութիւնը,
Մուպահեաճեանին քառաձայնի սէվ-
տան, Թորոսեան Գրիգորին զգալիականը,
սակայն կ'ըսեն թէ բուժումը կարելի պիտի
ըլլայ երբ բաւական դրամ ըլլայ:

X

Շիտակը ըսելով այս անգամ չը համար-
ձակեցայ իմ ոտանաւոր բանաստեղծութիւ-
նըս ի լոյս ածել, երբ վերջին պահուն իմա-
ցայ թէ՛ ւ յանգարան ւ անունով գիրք մը
հրատարակուած է ոտանաւոր գրողներու
համար, հետեւաբար երբ աչքէ ելած դրամ
ունենամ, պիտի գնեմ հատ մը, եւ ըստ
այնմ յաջորդ անգամ պիտի գրեմ ոտանա-
ւորս, զայս ի գիտութիւն ոտանաւորձեաց
ժանուցանելով:

Մնամ

Ուր որ եմ

ԵՐՄՈՒ


ՍԿԷԼՈՐ



ՄԵՐ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԵՍ

ՊԱՐՍԻՑ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Փետր. 11 ին (Ը. Ե.) կիրակի օրը, կես
օրէ ետք ժամը 1¹/₂ ին տեղի պիտի ունենայ
Պարսից դեսպանատան ընդարձակ սրահին
մէջ երաժշտական եւ գեղարուեստական շէնդ
ցերեկոյթ մը, որ եղանակիս անեմէն փայ-
լունն ըլլայ կը խոստանայ իր յաւագոյն կազ-
մակերպութիւնովը, Պարսից դեսպան Վսեմ.
Միրզա Բիզա խանի հովանաւորութեան ներ-
քէ: Այս նուագահանդէսին Կարգադիր Մա-
նախանի անդամներն են Վսեմ. Մուխար-
պէ (պատուակազ նախագահ), Վսեմ. Մու-
րաֆա խան (նախագահ), եւ Տեարֆ Մարթեմ
Յակոբեան (գանձապետ), Պարօցի (պա-
տուակազ ֆարսուդար), Իլիասֆո, Քօրասիս,
Յովհաննէս խան, Քէշաս Յուսէս պէ, Սա-
վաշան խան, Դրիգոր խան Եւսեաննէան,
Մազուն Սեպուհ պէ, Լ. Սերվիշէն, Ժ.
Սթալֆօ, Է. Վանֆան (ֆարսուդար) եւ Տֆ.
Սաւունէ խան: Նշանաւոր արուեստագէտներ
եւ արուեստագիտիկներ իրենց մասնակցու-
թեան բաժինը պիտի բերեն այս նուագա-
հանդէսին, որ ամէն տարի գերագանց կը
հանդիսանայ բոլոր այս կարգի նուագահան-
դէսներուն մէջ, իր նոյն յայտագրովը եւ
անբերի կազմակերպութեանը:



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Սինկերի ընկերութիւնը ինչ օրէն բա-
ցունը պիտի կատարէ Դեղարուեստական նոր
Յուցահանդէսի մը, որուն գլխաւոր հրա-
պոյրներէն մէկը պիտի կազմէ, միմիայն
արուեստագէտ եւ ամաթօն. կիներու կողմէ
ստեղնագործուած գեղարուեստական արտադ-
րութիւններու յատկացուած մասնաւոր Սալոն
մը: Մեր ընթերցողներուն եւ մասնաւոր
ընթերցողիկներուն մտքէն ելած ըլլալու
չէ տակաւին այն 3 յուցահանդէսները, զոր
Սինկերի ընկերութիւնը կազմակերպած էր
տակաւին, մին միւսէն աւելի գերագանց
եւ աջաւոր քէ գեղարուեստի եւ քէ նար-
տարարուեստի տեսակներէն:

Անշուշտ, մեր չմնայ ընթերցողիկները
պիտի փութան օգտուիլ այս եզակի առի-
թէն, զոր Սինկերի յուցահանդէսը պիտի
գայ ընծայել իրենց, միմիայն ցարդ գրեթէ
անծանօթ մնացած իրենց գեղարուեստական
նշանակն ու տաղանդը ծանօթացնելու եւ գը-
նահատել տալու համար հասարակութեան:
Սինկերի մեքենաներու վրայ բանուած իրենց
այլազան ու սիրուն ստեղծակերպութիւնները
ցուցադրելով հոն, այդ մասնաւոր Սալոնին մէջ,
որ այդ ձեռագործներուն փայլն ու յարգը
անգամ մը եւս շեշտելու առաւելութիւնը
պիտի ունենայ: Մեր կիս արուեստագէտները
միջոցը պիտի ունենան իրենց գեղարուեստի
տաղանդը արժեքնելու եւ փայլեցնելու:

Սինկերի ընկերութիւնը փափաքելով բո-
լոր պէտք եղած դիւրութիւնները տալ ամէն
այն սիկիկներուն եւ օրհորդներուն, որոնք
ուզելով մասնակցիլ յառաջիկայ Դեղարուես-
տական Յուցահանդէսին, ընկերութեան պի-
տի յանձնել իրենց մեքենա մասներուն ար-
տադրած ստեղնագործութիւնները, Յուցա-
հանդէսին մասնաւոր Սալոնին մէջ ի տես
դրուելու համար, անոնց տրամադրութեան
տակ կը դնէ իր մասնագէտ պաշտօնէութիւնը,
որուն հետ կարելի է խորհրդակցիլ, կիրա-
կներէ գտն, ամէն օր, Ընկերութեան Բե-
րայի Տնօրէնութեան գրասենեակը, ինչպէս
նաեւ նոյն տեղ գտնուող Ձեռագործի Մաս-
նէրուն մէջ, Բերա Մեծ-Փողոց թիւ 348,
ուր անոնք պիտի կրնան բանիլ իրենց ձե-
ռագործները, Աստեղնագործութեան Ճիւղին
Տնօրէնութիւնն ուղղակի հսկողութեան տակ:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆ. — Քննութիւնները տակաւին կը շարունակուին երեւան հանելու համար այն անձը որ յանգըզած էր, դիւանէն դուրս հանել, երուսաղէմի երկու եպիսկոպոսներուն ուղղուած պատրիարքական պաշտօնագիրին պատճէնը:

Ծ. Խ. — Պատրիարքարանը մեծ մտահոգութենէ մը ապատելու և անոր քննութեան գործը դիւրացնելու համար, կը փութանք փոքրիկ ծառայութիւն մը մատուցանել մեր կարգին, մէջ տեղ հանելով հեղինակը այդ գործին:

Մտիկ ըրէք ուրեմն.

Մեր պատուական բարեկամը միւսիւ Ռէօթկէնն է որ Բ. Ճառագայթները լոյս աշխարհ բերելու յանցանքը գործած է: Երուսաղէմի մէկ քանի վարդապետներ որոնք շատ աշխատասէր աշակերտներն եղած են Բ. Ճառագայթներու հնարիչին, Ճառագայթները Ճառագայթեցուցեր են և գոյ նամակին պարունակութիւնը իբր բաց ընդօրինակեր են: Ուրեմն յանցանքը միւսիւ Ռէօթկէնինն է կամ անոր Բ. Ճառագայթներուն:

ՌՈՏՈՍԹՈՅ. — Տեղւոյս Ս. Թագաւոր եկեղեցիին քահանաներէն Տ. Մամբրէ և Տ. Գարեգին որոշած են անհրաժան ամուսնութիւններ կատարել, ուստի ով որ ամուսնանալու հրաման չկարենալ առնելու կասկած ունի, կրնայ վստահաբար դիմել վերոյիշեալ քահանաներուն:

Ծ. Խ. — Այս քահանաները մեծ խեր մը ըրած կըլլան եթէ կարենան Պուրէշի Տ. Մոսկոֆեան քահանան իր Պայծառ հոմանունին հետ կարգել, քանի որ հրամանի պէտք չեն տեսներ: Ասով քոնէ Պուրէշի եկեղեցիին մէջէն ծեծկուուքը վերցնելու բարիքը գործած կըլլան:

ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՎՍԵՄԱՓԱՅԼ

ՍԻՄԵՕՆԱՔԻ ԷՖ. ՍԻՆԻՍՏՈՂԼՈՒԻ

Երևալարթի օր Պէշիքթաշի Յունաց Ս. Աստուածածնայ եկեղեցիին մէջ, խուռն բազմութեան մը ներկայութեան տեղի ունեցաւ յուղարկաւորութեան հանդէսը, Յոյն բարերար Վսեմափայլ Սիմեոնաքի էֆ. Սինեստողլուի:

Յուղարկաւորութեան հանդէսին կը նախագահէր Տ. Եօաքիմ Ս. Պատրիարքը, շրջապատուած բազմաթիւ Մետրապոլիտներէ և յիսունէ աւելի քահանաներէ, որոնք Մայրաքաղաքիս զանազան թաղերէն փութացած էին:

Մեռելական արարողութիւններէն վերջ, Հալքիի Աստուածաբանական վարժարանի աւագ ուսուցիչներէն Հայր Տիմիթրիօս Եօրկիատիս, յուլեալ շէշտերով, տխրազոյցիկ դամբանական մը խօսեցաւ, ի վեր հանելով Հանգուցելոյն բարեմասնութիւնները:

Դագաղին կը հետեւէին համագային ընտրեալ հոգ բազմութիւն մը, Մայրաքաղաքիս Պետական, Առեւտրական, Օեղանաւորական և Քժշկական դատակարարներէն:

Խմբագրութիւնս այս տխուր առթիւ իր անկեղծ յաւակցութիւնը կը յայտնէ Հանգուցեալ Սիմեոնաքի էֆէնտիի պարագաներուն:

Արժանատի աւսէն ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապը այլ ճատտեսի, քիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴ՝

ՓՈԲՐ ՏՂԱԹՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՄ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ աննդային մասերն եղան մսին, ուղեղին, ողնուղիղին և փոսփաթներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուորիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և զնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Զինու համաբաւոր բժիշկներէն. չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, գալիութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր չլային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐՔ, Պահճէ-գաբու, ջամանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և գեղորէից մթերանոցներու քով:

50—28

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԼԱՆՍԵՐԶԵԼԵՆԱՅ

Արուց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՁԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօխալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիններու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն դիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց բեղուններու և տղայոց չիք և դիմացկուն ֆութիւլներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ չերմայէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Յաւարկութիւն չկայ, թիւը 2 զրչ. է:

Գաւառներէն յանձնարարութիւնը փութով կը կատարուին: 50—23

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ Տ.

ԲԱՍԻՄ

ՍԻՄԷՈՆ ԾԵՐՈՒՆԻ

Յ.ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՀՐԱԶԵԱՅ ՏԷՐՈՍԿԻ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՕՐ. ԷԼԻԶ ՀԱՃԵԱՆ

Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ԼԵՒՈՆ

ԵՐՄՈԳ

ԵՒ


ԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ԿԸ ԲՈՂՈԲԷ՝

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐԾ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ ԱԺԱՆ

Ե Ի

ՀՈՏԱԻՏ ԹԷՅԵՐ

Հ Է Ր Ճ Ա Յ Ի Ա.ՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, գրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, ֆանթէզիներ և թօափիէներ, ամերիկեան կօշիկներ: Ունի նաև կահկարասի, ձեղունի լամպարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամփօններ ու պիսիկէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով:

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար:

Ա. Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար չաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել:

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Անգամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն գժուարահաճ յաճախորդները:

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղը

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ

50-18

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են: